

որի մայրն էր Մ ազանդարանի երեւելինե-
րէն: 3, Աաջաֆ — կուլի միրզայ, վալե
մականուանեալ, որա մայրն էր *) վ ը-
բաստանի կողմէն: 4, Աասրուլայ միրզայ
Համամայր Իմամ կուլի միրզին: 5, Թէյ-
մուր միրզայ, մականուանեալն Հասմուլ
գովէ, Համամայր Բզա — կուլի միրզին:
6, Շահսուլիս միրզայ Համամայր Աա-
ջաֆ — կուլի միրզին: 7, Ջահնգիր միր-
զայ: 8, Աքպար միրզայ Համամայր Շահ-
բուլիս միրզին: 9, Քէյ խօսրով միրզայ,
մականուանեալ Սուփահ Սալար, սորա
մայրն էր դուստր Օէֆէրէնկու Ամիրզու-
նէ խանի: 10, Իսքանդար միրզայ, Հա-
մամայր Թէյմուրազ միրզի հետ: 11,
Աադր միրզայ, Համամայր Իմամ կուլի
միրզի: 12, Մահամմեդ — Քեազում միր-
զայ, մայրն էր Շիրազցի: 13, Մահամ-
մեդ միրզայ՝ Համամայր Բզայ կուլի միր-
զին: 14, Քամրան միրզայ: 15, Դաբար
միրզայ: 16, Սուլթան — Իբրահիմ միր-
զայ, Համամայր Քամրան միրզին: 17,
Մանուչէհր միրզայ, մայրն էր Թուրքմա-

(*) Պարսիկները Վրաստանէն բերած գերի-
ները չկարողանալով զանազանել Հայ թէ Վը-
րացի լինելը, և մանաւանդ գերիքը թէ արու թէ
էգ, երեխայ կամ անչափահաս լինելով, և ըստ
սովորութեան Վրաստանցի Հայերի՝ իւրեանց
մայրենական լեզուով չխօսած, չեն կարողացած
յայտնել իւրեանց ինչ ազգէ լինելն, ուստի
Պարսիկներն էլ նրանց միշտ կզրնն ~~ալ~~ ~~հարգում~~
Գեւորդան՝ այս ինքն Վրաստանի մարդկանցից,
և ես էս բառերը Հայացնելով գրած եմ Վրաս-
տանի կողմէն, թէև ըստ մեծի մասին նրանք Հա-
յեր են եղած, ինչպէս հետզհետէ վերահասու
լինելով մինչև նրանց ազգանուններն ևս զը-
տած եմ կամ գերիներէն կամ նրանց զաւակ-
ներէն և թողնուելն իմանալով :

նու հի: 18, 1, Երաջ միրզայ՝ համամայր
զեբնոյն և միասին են ծնած (երկու որ-
եակ): 19, Թահահմանէր միրզայ:

$$(1, \frac{1}{2} \log \frac{1}{1-x}, \frac{1}{2} \log \frac{1}{1-x}, \dots)$$

ԳԱԼՈՒՍ ԵՐԲԱՋԱՆԵԱՆՅ .

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՄԼԵՕՏ ԻՄՆ ՏԵՍԻՏՈՒՄՆ

ՄԵՐ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԵԼՆ ՎԵՐԱՅ.

(R T T T - - 4 2 5 - 5 - 2)

Մեր մէջ այժմ մի խնդիր եւս աւելի կ'լլուգուի, այն է բանխմաց քահանաների պակասութիւնը. այս պատճառաւ ոմանք մեղադրում են Հոգեւոր իշխանութեան. սակայն եթէ խորը գընալու լինինք՝ մեր Հոգեւոր իշխանութիւնը բոլորովին յանցանք չունի այս դէպքում, որովհետեւ մեր ժողովուրդը այժմ այնպիսի խեղճ գրութեան մէջ է, որոյ կամքը գողանալու համար բաւական է մի մի բաժակ. եւ ահա՝ բաղմութիւնը բռնելով մի գարի ձեռքից՝ գոչում են « Բըլ Կէր - Կէր ին Կոտ Էս Կ, Ղէ Կոտ Էս Կ, ին Բոք Կանան Կոտ Էս Կ, ին Կոտ Էս Կ » . Հոգեւոր իշխանութիւնն եւս երկուց չարեաց փոքրագոյնը ընտրելու համար՝ եթէ բարուց՝ վարուց եւ կարելի եղած ուսմանց կողմանէ աւելի թերութիւններ չկան՝ նոցա ջանկութիւնը կատարում է, կամեցածներին պէս նոր ծնածը մկրտող, մեռածը թաղող պաշտօնեաներ տալով՝ մինչեւ որ ծխական դպրոցներն հասնին իւրեանց

նպատակին ժամանակի պահանջին համեմատ յառաջ խաղալով. ապա թէ ոչ, Զայնագրութեան նման քահանայացուին կարեւոր եղած բոլոր գիտութիւնները հարկեցուցիչ կը լինէին եւ կը պահանջուէր Թեմական Դպրանոցներէց ստացած վկայականը. արդէն քահանայացուների համար հրահանգներ եւս տպուեցան Արարատի մէջ. բայց դեռ այսպիսի պահանջներ անելը եւ խտրութեամբ հետեւելը բազում խոհեմութեան եւ հեռատեսութեան կը կարօտի մեր խեղճ եւ թերակիրթ գրութեան նայելով:

Զը նայելով որ՝ Հայը ըստ մեծագոյն մասին՝ կրթութեան շատ ստոր աստիճանի վերայ է, այնու ամենայնիւ նա զգալով ուսման օգուտները իւր որդւոյ դաստիարակութեան համար՝ ամեն միջոց գործ է դնում. բայց դժբաղդաբար կամ չը կան դաստիարակներ ժամանակիս պահանջին համեմատ, եւ կամ թէ կան՝ այնպիսիքը իւրեանց համար ստորութիւն են համարում Հայ գըւորոյններում գասախօսել: Այսպիսիքը դեռ մի գործ չսկսած՝ աղաղակում են աւհնաբ լինել, հին եւ նոր սերունդներ են բաժանում, կղերական եւ հակակղերական կուսակցութիւններ են երեւակայում, եւ սոցա մէջ իբր թէ յամառ ընդդիմութիւններ տեսնելով յուսահատուում են, թէպէտ իսկապէս այս ամենը մի տեսակ երազական ցնորքներ են՝ եւ բոլուն երեւակայութեան ծրնունդ: Նոր սերունդ համարուածը օտար երկնքի տակ մնալով եւ մի կատարեալ ծանօթութիւն չունենալով

իւր հայրենիքի դրութեան վերայ՝ անգիտակցաբար այդ կուսակցութիւնները բաժանում է, եւ այս անում է նա՝ որ ցոյց տայ՝ թէ եւրոպական ազատ կրթութիւն ունի, եւ եւրոպական գաղափարներ է տարածում, բայց մտածելու է՝ որ մենք եւրոպայում չենք, այլ Ասիայումն ենք, եւ լինելով Հայ՝ ունինք մեր ազգային եկեղեցին, հարազատ հոգեւորականներով, ոչ թէ օտաւ շահերի ծառայող կամ պապի արբանեակ կղերներով: Եւրոպայում կղերը լինելով բոլորովին ջոկ նպատակի ծառայող քան ազգի օգուտներուն, որովեհօտեւ նա ազգի ազատ ծնունդ չէ, եւ ոչ ազգային եկեղեցւոյ պաշտօնեայ, այլ մի ուրիշ դասակարգ եւ պապականութեան նպատակին կարապետ. այս պատճառաւ կարելի է նոցա առանձին կուսակցութիւն կազմել: Բայց Հայոց եկեղեցին ո՞ւմն է. — ի հարկէ ազգին: — Հայոց հոգեւորականները ո՞ւմ պաշտօնեաներն են. — ի հարկէ եկեղեցւոյ պիտի պատասխանեն: Հայ-հոգեւորականի ջանք ո՞ւմ համար է. — եկեղեցւոյ, ուրեմն եւ ազգի համար. եթէ ազգի համար է, որով իրաւամբ կուսակցութիւններ են բաժանում: Իւրաքանչիւր կուսակցութիւն ունի իւր առանձին նպատակը. եթէ կղերական կուսակցութեան նպատակն է ազգի շահը, ուրեմն հակակղերականինը ազգի վնասն է. բայց այս տեսակ մի իրաւացի կարծիք անտրտունջ կտանե՞ն մեր յարգելի հակակղերականութիւն քարոզողները, ո՞չ անպաքէն նոքա եւս գոչում են «մենք ազգի շահերն ենք

մտածում, : Եթէ հակակրեականը եւ կրեականը երկուքն եւս յօգուտ ազգի են մտածում, ուրեմն մի նպատակով երկու կուսակցութիւն կը լինի. ամենեւին ոչ: Եթէ չի լինի, ուրեմն չկայ եւ հակառող կուսակցութիւն:

Բայց նա աղաղակում է ցնորական յուսահատութեամբ: Ամենայն ինչընդդէմ է մեզ, որովհետեւ փթեալ հին սերունդը, եւ աղատութեան ճնշող նախապաշարեալ կրեականութիւնը դեռ իւրեանց յամառ դրութեամբ կան: Մեր պարոնները այսպէս աղաղակում են, կամենալով ցոյց տալ իւրեանց իբրեւ նոր սերունդ լուսաւորեալ եւ հայրենեաց շահերին անձնադիր. թող նոքա այնպէս կարծեն: Մենք եւս այսպէս կը կարծենք, ուր չկայ գիտակցական մի նրպատակ, այնտեղ չկայ կուսակցութիւն, եւ հակառակող ոգի. եթէ ասէք Հայ հոգեւորականը ազիտութեամբ կաշկանդուած աւելի լաւ չը գիտէ իւր ազգի շահերը թէ ո՞ր տեղ են, այդ կարելի է. եթէ ասէք Ժողովուրդը բազմադարեան թմրութիւնից չէ կարողանում շուտով սթափուել եւ հսկայաքայլ դէպի գիտութեան գիրկը վազել, այդ եւս կարելի է: Բայց նոցա անգիտութեամբ արածը իբրեւ կուսակցութեան ջանք համարելը՝ այդ անհնա՞ր է: Թող յարգելի պարոնները ցոյց տան Հային նորափառ կողմերը՝ բայց խոհեմաբար, տեսնենք նա կը մերժէ. թող կրթեալ ուսումնականները ցանկանան հոգեւորական լինել եւ մի ազգու եւ բարենախանձ գրգիռ տալ հոգեւորականութեան դէպի յառաջագիմութիւն, տես-

նենք նոցա ձեռքերը ո՞վ է կաշկանդելու:

Այո՛ մեր երիտասարդները նորութիւնը միայն արտաքին ձեւով են ընդունում, եւ մտքերը միշտ հետեւողութեամբ: Բայց արտաքին ձեւը բաւական չէ, հարկաւոր է ներքինն եւս: միայն ասելով բան չի դառնայ, ջանացէք գործով եւս ապացուցանել. քարոզեցէք ուսումնասիրութիւն, եւ ինքեանքդ ուսուցէք. խոհեմութեամբ եւ համբերութեամբ կարելի է նպատակի հասնել:

Հին սերունդ համարուածը տուելի է նմին մի պատճառով եւս, եւ այս սատիկ խնայողութիւնն է: Այս տեսնելով մեր պարոնները՝ իւրեանց հօրը կոչում են արձա՛նի երէրպագո՛ւ. եթէ որդին հօրը խնայողութեան համար հոսպալս կամ արձա՛նի երէրպագո՛ւ է հոլո՛ւ, միթէ՞ զարմանալու է՝ որ հայրն այնպիսի որդուն ասէր «որդիք չեղաք՝ որդունք եղաք»: Այն որդւոյն՝ որ հօր քրտնախառն արդար վատտակը վատնում է անխնայաբար, այս միթէ՞ արդարութիւնն է. հասարակաց տեղերում փոխանակ առողջ գաղափարներով հասարակութեան պէտքերի վերայ մտածելու եւ ըստ կարեաց դարման մատուցանել աշխատելու՝ չարաչար վատնե՛լ հին սերունդ համարուածի գո՛յքը, եւ դեռ վատաբանե՛լ իբրեւ Խնայող, արձա՛նի երէրպագո՛ւ, արող լուսաւորութեան: Լուսաւորութեան հերոսներ, ձեզ տեսնելով, դեռ Հայը աւելի անսայթաք է դէպի ուսումն եւ գիտութիւնք. լուսաւորութեան անունով գոր-

Ժուած անկարգութիւնները գեռնորան չեն զգուացնում. խօսքս բոլորի համար չէ, այլ մի քանիների վերայ՝ որք գերանակիր աչքով ուրիշի շիւղը տեսնելով աղաղակում են եւ հարայ տալիս: Հայր յամառ չէ, ապացուցէք մարդավայել կերպով նորա վատ կողմերը, նա խելոյն ուղղուել կըսկսի. գայթակղութեան տեղիք մի տաք, նա ձեզ կը համակրէ: Նորա տգիտութիւնը իբրեւ յանցանք կոպտութեամբ երեսովը մի տաք, եւ նա ձեզ հետեւելով դէպի գիտութեան պողոտայն կը վազէ. սկսեցէք խոհեմութեամբ, ջանացէք քաջաբար, անշուշտ ձեր բարի աշխատանաց վարձը կը վայելէք՝ կհասնէք յառաջագրեալ նպատակին. բայց նախ՝ նպատակը սրբեցէք. ապա թէ ոչ լոկ արտաքին երեւոյթը՝ եւրոպական հանդերձը եւ նորաձեւութիւնը աւելի կործտաբեր կը լինին քան օգտաբեր. հասարակաց տեղերում դրամներ վառները, նորաձեւութեան ոգւով ստրկանալը, նորութեան ճաշակը չեն կարող ~~հաղթահելու~~ ^{հաղթահելու} ~~հետեւ~~ ^{հետեւ} ~~արդարեւ~~: Այս ասելով ոչ եթէ կամենում եմ ասել՝ թէ հասարակաց զուարճութեան համար բոլոր ջանքերը զուր են, ոչ. բայց ծայրայեղութիւնը ունի իւր վատ հետեւանքը:

Հայ երիտասարդներ, վերջապէս թէ գիւղացին եւ թէ քաղաքացին այժմ համոզուած են, որ փրկութիւնը ուսմամբ է. եւ ահա ամեն դռներ բաց են ձեզ համար: Հասարակական գործերում աղատ մոռտ ունիք, գործելու եւ աւանդն եւս ձեզանից՝ գործեցէք:

Թէպէտ ուսումնարանները կառավարուելով եկեղեցական արդիւնքով՝ բարձրագոյն իրաւասութիւնը եկեղեցական նուիրաբերութեան ձեռքն է, սակայն որովհետեւ ժողովուրդն է եկեղեցի կազմողը, այս պատճառաւ եւս Հոգեւոր Իշխանութիւնը դպրոցների կառավարութիւնը յանձնում է ժողովրդից ընտրուած հոգաբարձուներին, որ ժողովուրդը տեսնի իւր տուածի արդիւնքը իւր ձեռքով գործ դրուած՝ եւ աւելի խրախուսուի: Ահա ընդարձակ ասպարէզ. բայց գուցէ ասեն մեր ուսումնական երիտասարդները՝ թէ անմասն են այս իրաւունքից, սակայն եւ այս անհիմն է. որովհետեւ, օրինակի համար Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը շատերին յայտնի երիտասարդներն են կազմում: Ուրեմն չկայ բռնաբարութիւն, չկայ խտրութիւն հոգեւորականի եւ աշխարհականի մէջ. եթէ լինէր՝ ուրեմն Ներսիսեան դպրոցի պէս հռչակեալ ուսումնարանում՝ աշխարհական ուսուցիչ եւ հոգաբարձու լինել անկարելի էր, որոնք դժբաղդաբար փոխանակ դպրոցի յառաջադիմութեան համար ջանալու, տխուր նկարագրութիւններով են սեւացնում հայկական հրատարակութեանց թերթերը, որք երեք ամիս ամբողջ նոյնութեամբ տեղի էին ունենում: Այս այնպիսի մի իրողութիւն է՝ որ պատիւ չէ բերում գիտնական հոգաբարձուներին:

Այն տեղ հին սերունդ չկար, նոր կրթուած հոգաբարձուները եւ նոր սերունդ ուսուցիչներն էին ուսումնա-

րանի կառավարիչքը՝ բայց նոցա գործունէութիւնը եղել է եւ լինում է միմեանց անվայել տխուրանքով փառադարձել՝ միմեանց վարկը գետնուր զարկել եւ սորանով անպատուել ուսումնարանի անունը:

Ահա յայտնի ապացոյցները՝ որ հոգեւորական դասը այլ նպատակի չէ ծառայում. հին սերունդը նորին չէ դիմադարձում. որովհետեւ հոգեւորական դասը իւր խնամոց յանձնուած դպրոցի կառավարութիւնը յանձնում է ժողովրդին եւ ուսումնական եւ բարեբարոյ անձանց:

Թո՛ղ չբաժանեն մեր պարոններ զհայր ու զորդին առանձին կուսակցութիւնների՝ թո՛ղ երիտասարդներն կղերական ճնշող ոգի եւ խարդախ կուսակցութիւն չերազեն. որովհետեւ Իգնատիոս

Լոյողայի որդիքը՝ այժմեան եղուխոնքը տարբեր են Հայ հոգեւորականի ուղղութիւնից. Հայ հոգեւորականը հակառակ կարծեաց՝ իմ եւ քո չէ բաժանում, հաւասար իրաւունքով ազգային գործերին մասնակցելու արտօնութիւնը վայելում է թերեւս ժողովրդից ինքըն ստանալով:

Թո՛ղ կրքերը հեռանան մի աղգին մի սիրտ պէտք է, հօրը տկարին օգնէ թո՛ղ եւ ընտրը միասին՝ խեղճ դիւղացուն, որի անմխիթար գրութիւնը թէ՛ գիտութեան, թէ՛ երկրագործութեան եւ թէ՛ արհեստից մէջ կարեկցութեան արժանի է, եւ նորան թերակրթութեան ողորմելի գրութիւնից ազատելու է:

ԵՆՈՎՔ ՍԱՐԿԱԻԱՅ ՄՈՎՍԷՍԵԱՆ.

Ի Բ Ա Ն Տ Ն Ն Ի Չ Ա Ր Ո Ւ Ր Ի .

Յերկնային սլայծառ կամար լայնատարած կապուտակ,
Փայլին փայլուն աստեղունք շրջան առնուն բոլորակ:
Պարշաւէ սորա մէջէն ահագին գունտն Արեգի,
Լուսաւորել տիեզերն յերփներանգ գոյնս հաճելի:
Շողայ նորա լուսերէն՝ Ախշաբուրի գետ վրսեր,
Չոր ծնանին ի կարկաչ հազար մանր առուակներ:
Ոլոր մելոր կսահին գէպ ի հարաւ գնալով,
Արծաթափայլ լուսինէն շքեղութիւն առնելով:
Եյս գետն եւ առուններ մի դաշտի մէջ ընթանան,
Յողին խրեանց ցնցուղներ՝ բոյսերն զուարթանան:
Պարգարին կանանչներ՝ Ախշաբուրի սիրուն դաշտ.
Հակառակիչ հողմերն կլինին այս տեղ միշտ հաշտ:
Քօղարկած է այս դաշտն գոյն գոյն ծաղկանց թուփերով,
Սհրճուին աստ թռչուններ անուշ անուշ երգելով: